Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հունիսի 12-ի N 330 - Ա
որոշման

«ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ «ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ» Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակն է, ի կատարումն ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 03.10.2014 թ. N Մ – 1004 – Ա որոշման, «Այբ կրթական հանգույց» հիմնադրամին՝ որպես սեփականություն հանձնել «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի կատարման ընթացքում կատարված շինարարական աշխատանքների արժեքը, ձեռքբերված գույքն ու նյութերը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի բարեգործական որակման նպատակը Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելն է:
3.	Բարեգործը	«Այբ» կրթական հիմնադրամին նվիրաբերված միջոցների հաշվին (աջակիցների ցանկը ներկայացված է «Այբ» կրթական հիմնադրամի կայք էջի «Մեր աջակիցները» բաժնում՝ https://foundation.ayb.am/hy/supporters)
4.	Ծրագիրը կատարողը	«Այբ» կրթական հիմնադրամը (ՀՎՀՀ 01558429, Հասցե՝ ք. Երևան 0037, Ազատության 1/21-1)
5.	Ծրագրի իրականացման վայրը և ընագավառը	ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում տեղակայված «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում»-ն է, կրթություն:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1,747,101,018.91 (մեկ միլիարդ յոթ հարյուր քառասունյոթ միլիոն մեկ հարյուր մեկ հազար տասնութ) դրամ և 91 լումա:

7.	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացողը Երևանում տեղակայված ոչ պետական «Այբ կրթական հանգույց» հիմնադրամն է: Այն հանդիսանում է Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեով գտնվող հողամասի և շինությունների սեփականատերը, ինչպես նաև լինելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից որպես դպրոց լիցենզավորված կազմակերպություն և բուն հանրակրթական գործունեություն իրականացնող, հանդիսանում է գույքի մասով բարեգործություն ստացողը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	28.05.2020 թ.-ից մինչև 29.06.2020 թ:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրը նախատեսում է «Այբ» կրթական հիմնադրամի և «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի միջև 2020 թ. ապրիլի 28-ին կնքված նվիրաբերության պայմանագրի համաձայն՝ «Այբ» կրթական հիմնադրամի բարերարների միջոցներով իրականացված շինարարական աշխատանքների արժեքի և ձեռք բերված գույքի ու նյութերի փոխանցում «Այբ կրթական հանգույց» հիմնադրամին՝ որպես սեփականություն: Միջոցառումների ծախսերը կկազմեն 1,747,101,018.91 (մեկ միլիարդ յոթ հարյուր քառասունյոթ միլիոն մեկ հարյուր մեկ հազար տասնութ) դրամ և 91 լումա, որից. 1. 91,245,521.29 (ինսունմեկ միլիոն երկու հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր քսանմեկ) դրամի և 29 լումայի մասով նախկինում հարկային արտոնություն չի ստացվել, 2. 1,655,855,497.62 (մեկ միլիարդ վեց հարյուր հիսունհինգ միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար չորս հարյուր ինսունյոթ) դրամ և 62 լումայի մասով նախկինում հարկային արտոնություն ստացվել է:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի իրականացումը ենթադրում է «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացված շինարարական աշխատանքների արժեքի և ձեռք բերված գույքի ու նյութերի հանձնում «Այբ կրթական հանգույց» հիմնադրամին՝ որպես սեփականություն: Ապրանքների և ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 1,747,101,018.91 (մեկ միլիարդ յոթ հարյուր քառասունյոթ միլիոն մեկ հարյուր մեկ հազար տասնութ) դրամ և 91 լումա, որից. 1. 91,245,521.29 (ինսունմեկ միլիոն երկու հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր քսանմեկ) դրամի և 29 լումայի մասով նախկինում հարկային արտոնություն չի ստացվել, 2. 1,655,855,497.62 (մեկ միլիարդ վեց հարյուր հիսունհինգ միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար չորս հարյուր ինսունյոթ) դրամ և 62 լումայի մասով նախկինում հարկային արտոնություն ստացվել է:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	«Այբ»-ը կրթական հիմնադրամ է՝ ոչ առևտրային կազմակերպություն, իր գործունեությամբ հաշվետու է Հոգաբարձուների խորհրդին ու վերահսկվում է նրա կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու եւ գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ